ցույց աներ նաև քաղաքի ջենովացի գանձապահի գավառանությունը, որը գաղտնի բանակցություններին մեջ էր մտել Թուրքական Հրամանատարության հետ և նրան հանձնել քաղաքի դարպասի բանալիները։ Ղրիմահայերի հերոսական դիմադրությունը ցույց տալու համար կարելի էր նաև մատնացույց անել Սուդդայի հերոսամարտը, ուր հայերը, հույները և իտալացիները հերոսաբար կռվեցին Թուրքերի դեմ և բոլորն էլ ընկան անհավասար մարտում։

Ղրիմը Թուրքերի կողմից նվաճվելուց հետո թերակղզում ստեղծվեց նոր իրադրություն։ Ուստի անհրաժեշտ էր, որ Միքայելյանը Ղրիմի հայ գաղթավայրի պատմությունը Թուրք-Թաթարական տիրապետության շրջանում ներկայացներ առանձին գլխով, ավելի մանրամասն կանգ առներ տվյալ ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների վրա։

Միքայելյանը փաստեր է բերել այն մասին, թե ինչպես Թուրք-Թաթարները անընդմեջ հարձակվում էին Ակրաինայի վրա և այնտեղից գերիներ բերում՝ արևելյան շուկաներում վաճառքի հանելու համար։ Այդ՝ Թաթարական իշխանությունների եկամտի հիմնական աղբյուրներից մեկն էր։ Հայտնի է այդպիսի մի դեպք, երբ սուլթանը չի համաձայնվում Ղրիմի խաներից մեկին Թույլ տալ առպատակության դուրս գալու դեպի Ռուսաստան՝ գերիներ բերելու համար, խանը բողոքում է սուլթանին. «Դու Թույլ չես տալիս ինձ առպատակության գնալու, ապա ի՞նչ ուտեմ ես, ինչպե՞ս ապրեմ։ Ստրկավաճառության շուկաներում Թուրքերը և Թաթարները այնքան շատ էին ռուս գերիներ բերում, որ Եգիպտացի մի խոջա հարցրել է ստրկավաճառներից մեկին. «Այդքան գերի, որ դուք բերում եք Հյուսիսից, այնտեղ մարդ մնո՞ւմ է»։ Միքայելյանը հրապարակել է բազմաթիվ փաստեր այն մասին, որ հայ խոջաները խոշոր գործ են կատարել՝ գերեվարության մեջ գտնվող ռուսներին ազատելու և գերությունից ազատելու համար։

Աշխատության մեջ բավական հարուստ փաստերով է ներկայացված Ղրիմահայ մշակույթի բաժինը։ Այդ կարևոր է ոչ միայն գաղթավայրի պատմության, այլև հայ մշակույթի պատմության համար ընդհանրապես։

«Ղրիմի հայկական գաղութի պատմության» մեջ քննարկված են շատ այլ հարցեր ևս, որոնց վրա ներկա գրախոսականում մենք կանգ առնելու հնարավորություն չունենք։

Գիտական գիտությունների թեկնածու Վ. Ա. Միքայելյանը կատարել է գիտական լուրջ աշխատանք Ղրիմի հայ գաղթավայրի պատմության ուսումնասիրության գործում։ Նրա աշխատությունը կարևոր ներդրում է հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության բնագավառում։

Պրոֆ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

PAUL Z. PEDOUKIAN. *Coinage of Cilician Armenia.* The American Numismatic Society, New York, 1962, pp. 496.

ԶԱՐԵՀ Պ. ՊՏՈՒԿՅԱՆ. *Կիլիկյան Հայաստանի դրամները.* Ամերիկյան դրամագիտական ընկերություն, Վիեննա, 1963, 496 էջ։

Կիլիկիայի հայկական դրամների նոր հայտնաբերումները, որոնք կատարվել են վերջին 50—60 տարիների ընթացքում, մեծապես հարստացրել են Եվրոպայի, Ամերիկայի ու Ասիայի նշանավոր թանգարանների դրամագիտական բաժինները։ Պետական ժողովածուներից բացի աճել են նաև անհատական հավաքածուները։ Աշխարհի տարբեր վայրերում պահվող այդ ողջ դրամագիտական նյութի ամբողջական ուսումնասիրությունը և հրատարակությունը վաղուց հասունացած խնդիր է ոչ միայն դրամագիտության, այլև ընդհանրապես արևելագիտության ու մասնավորապես հայագիտության համար։

Իհարկե անցյալ դարի կեսերից հայկական դրամագիտության երախտավորներ Վ. Լանգլուայի և Կ. Սիպիլյանի կողմից թեև մշակվեցին Կիլիկիայի հայկական դրամների դասակարգման սկզբունքները, սակայն նրանց կորպուսի ստեղծումը մնում էր որպես բաղձանք։ Եվ ահա 70 տարի անց Զարեհ Պ. Պտուկյանի անխոնջ ջանքերով 1962 և 1963 թթ. անգլերեն և հայերեն հրապարակվեց «Կիլիկյան Հայաստանի դրամները» դիրքը, մի գործ, որ ամենայն իրավամբ հանդիսանում է խոշոր ներդրում դրամագիտության մեջ։ Հայատառ դրամների այնպիսի հավաքականություն է հրատարակված այս գրքում, որպիսին չեն տալիս հայ դրամագիտության նախորդ բոլոր հրատարակությունները միասին վերցրած։ Ի պատիվ Զ. Պ. Պտուկյանի պետք է ասել, որ այդ նյութը ուսումնասիրված է ոչ թե առանձին հրատարակություններից քաղած հիշատակումներով, այլ անմիջականորեն դրամներից

վերցված տվյալներով։ Հեղինակը եղել է տարբեր թանգարաններում և անձամբ տեսել է ներկայումս առկա յուրաքանչյուր հայկական դրամը, կամ ձեռքի տակ ունեցել է պատճենները բոլոր այն դրամների, որոնք ներկայացված են աղբում։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ ա. Կիլիկիայի հայկական դրամների ուսումնասիրման տեսական մաս (էջ 5—22, 1—124), բ. Կիլիկիայի հայ իշխանների ու թագավորների դրամների կորպուս (էջ 125—491)։ Այս վերջինը կազմում է աշխատության հիմքը, որում ընդգրկված են ներկայումս Եվրոպայի, Ամերիկայի և Արևելքի տարբեր երկրներում պահվող ոսկյա, արծաթյա ու պղնձյա դրամներ ընդհանուր թվով՝ 10503։

Հակիրճ առաջաբանից և օգտագործված աղբյուրների մատենագրությունից հետո հեղինակը տվել է ընդհանուր ակնարկ հայ դրամագիտության կիլիկյան բաժնի ծագման ու զարգացման մասին։ Այդտեղից էլ հայտնի է դառնում, որ զուտ հայատառ դրամների ամենավաղ հրատարակություններից մեկը եղել է Պետերբուրգում 1745 թ.։ Դրամագիտական նյութի քննարկումն ուղեկցված է Կիլիկյան Հայաստանի ֆիզիկական բարտեզով և նրա քաղաքական պատմության խիստ համառոտակի շարադրանքով, որում ընդգծված է, թե երբ և ինչպիսի դրամներ են թողարկվել կիլիկյան հայ իշխանների ու թագավորների կողմից։

Բնութագրելով Կիլիկիայի աշխարհագրական դիրքի նշանակությունը միջազգային առևտրի համար, հեղինակը տնտեսական և իրավական վավերագրերով բացահայտել է XIII—XIV դարերում Կիլիկիայի հայկական թագավորության հետ աշխույժ ապրանք-դրամական հարաբերություններից ընորոշ տվյալներ, որոնք շարադրված են «Կիլիկյան Հայաստանի վաճառականություն» խորագրի տակ։ Այստեղ ներկայացված են Կիլիկիա ներմուծվող ու արտահանվող ապրանքների ցուցակները, այդ ապրանքների գները, օտարերկրյա դրամների և հայկական դրամների անունները ու փոխհարաբերությունները, ինչպես նաև խիստ ուշագրավ տնտեսական բնույթի վկայություններ գրավոր աղբյուրներից։ Արժեքավոր է, մասնավորապես, 1307 թ. Վենետիկի և Կիլիկիայի հայոց թագավորության միջև կնքված առևտրական պայմանագիրը, որի հայերեն թարգմանությունը միջին իտալերենից կատարել է հեղինակը։ Նույնքան ուշագրավ են Կիլիկյան Հայաստանի չափերի ու կշիռների համեմատությունները XIV դարում առևտրով նրա հետ կապված երկրների չափերի ու կշիռների հետ։ Հեղինակը քննել է Կիլիկյան Հայաստանում զանազան դրամների համար գործածված հայերեն անունները (էջ 48—61)։ Հիրավի, միջազգային առևտրի բերումով Կիլիկիայում շրջանառության մեջ էին մտնում տարբեր երկրների, տարբեր անուններով թողարկված, միմյանց նկատմամբ տարբեր փոխհարաբերություն ունեցող ինչպես մուսուլմանական, այնպես էլ քրիստոնեական պատկերատիպի դրամներ։ Զ. Պ. Պտուկյանին հիմնականում հաջողվել է տալ այդ բարդ հարցի պարզաբանումը։ Գրավոր աղբյուրներում հիշատակված բազմաթիվ անուններից նա ընտրել է Կիլիկիայի հայկական դրամների համար առավել բնորոշ անուններ (էջ 55—61)։

Անդրադառնալով Ռուբինյան դրամների պատկերատիպի ծագմանը, հեղինակը կապակցություններ է նշում մի կողմից Հայաստանի պատկերաքանդակների, մյուս կողմից բյուզանդական ու արևմտաեվրոպական առանձին դրամների վրա եղած պատկերների միջև։ Վերլուծելով Ռուբինյան դրամների պատկերատիպը, հեղինակը իր այս գրքում ներկայացնում է 15 իշխանական և 10488 թագավորական դրամներ։ Հետաքրքրական են ոչ միայն իշխանական հազվագյուտ դրամները, մասնավորապես Թորոս իշխանի պղնձյա դրամները, այլև մինչև օրս անհայտ մնացած և Զ. Պտուկյանի կողմից Կ. Պոլսի թանգարանում հայտնաբերած՝ Կոստանդին I թագավորի ոսկե դրամի նոր օրինակը։ Կորպուսում բերված է դեռևս անցյալից հայտնի 16 կիլիկյան ոսկե հայկական դրամներից 9-ի նկարագիրը։ Երախտագիտությամբ պետք է նշել, որ Զ. Պտուկյանի ուսումնասիրությունների շնորհիվ հաստատվեց Կիլիկյան Հայաստանի ոսկե դրամների վավերականությունը ապացուցված նրանց կնիքների քննությամբ, մի գործ, որն իր ձևով չունի նախորդը հայ դրամագիտության մեջ։ Վերին աստիճանի ուսանելի են հեղինակի կազմած գծատախտակները Ռուբինյան արծաթյա ու պղնձյա դրամների քանակի, կշիռների ու նրանց մետաղի զտության վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե աշխարհի որ երկրում ինչպիսի Կիլիկյան դրամներ են պահվում։

Զ. Պտուկյանը իր իսկ հավաքածուի տվյալներով (բաղկացած 924 արծաթյա և 399 պղնձյա դրամներից) նշել է Ռուբինյան դրամների ծայրագույն ու միջին կշիռների փոփոխությունները տարբեր ժամանակաշրջաններում։

Դրամների կորպուսը հանդիսանում է աշխատության մեծ և ամենաէական մասը, որտեղ ամփոփված 10503 դրամները դասակարգված են 1—2249 համարների հաջորդականությամբ, ըստ որում կորպուսը ունի միանգամայն ինքնուրույն նշանակություն և կարող է հանդես գալ անկախ տեսական հարցերի շարադրանքից։ Ընտրված է դրամների նկարագրության խիստ հակիրճ ձև, յուրաքանչյուր օրինակի համար նրշ-

ված է նրա քանակը տարբեր ժողովածուներում, առանձին դեպքերում հիշատակվում են նաև նրանց կշիռները և մետաղի գտությունը։

Ողջունելով գրքի ծնունդը, որպես երևույթ հայ դրամագիտության մեջ, միաժամանակ ափսոսանքով պետք է ասել, որ այս գրքում բերված դրամների պատկերները չունեն մանրամասնություններն արտացոլող կատարյալ հստակություն։ Կորպուսում իշխանական շրջանի դրամները միանգամայն արդարացիորեն վերնագրված են տարեթվերի հիշատակումով, սակայն թագավորական դրամները զուրկ են այդ կարևոր նշումից։ Հենց այն իրողությունը, որ Կիլիկիայի հայկական դրամները ընդհանրապես թողարկված են առանց տարեթվերի, պետք է հարկադրեր հեղինակին կորպուսի մեջ թագավորական շրջանի դրամները ևս ժամանակագրելու միապետների գահակալության տարեթվերով, չնայած գրքի տեսական մասում, քաղաքական պատմության հետ կապված, այդ տվյալները բերված են։

Կորպուսի մեջ առանձին ենթավերնագրի տակ (էջ 134) ցույց են տրված ընդամենը երկու պղնձյա բացառիկ երկդրամներ (№№ 36, 37)։ Տարաբախտաբար դրանք չունեն ոչ մանրամասն նկարագրություններ և ոչ էլ լուսանկարներ, թեև ասված է, որ նման են նախապես նկարագրված №№ 23 և 27 արծաթյա երկդրամներին, բայց թե ի՞նչ կշիռ և տրամագծային չափեր ունեն՝ ընթերցողին մնում է անհայտ։

Հեթում-Քայկոբաղ երկլեզվյան խիստ սակավաթիվ կես-դրամների (№№ 836—838) և Կոստանդին III թագավորի Տարսոնում կտրված հաղվագյուտ դրամի (№ 2120) կշիռները նույնպես նշված չեն։ Ընդհանրապես ցանկալի էր, որ հիշատակված լիներին կորպուսի մեջ մտած բոլոր դրամների կշիռներն ու տրամագծային չափերը։

Ռուբինյան թագավորության արծաթ դրամների վրա, դաշտի կենտրոնական մասում դրվագված պատկերները վերցված են շրջագծերի մեջ։ Այդ շրջագծերը սակայն ոչ թե գծավոր են, ինչպես արտահայտված են գրաֆիկ ձևով (էջ 137—183, 140—216), այլ կետավոր են (տե՛ս նույն գրքի №№ 2—14 պատկերատախտակները)։ Լևոն I և Հեթում I թագավորների պղնձյա դրամների երկու երեսների վրա էլ նշված են ներքին և արտաքին շրջագծեր (տե՛ս 15—18 և 27—29 պատկերատախտակները), որոնք անտեսված են նկարագրության մեջ։ Հարկ էր, որ գրքում գոնե մի տեղ տրվեին նաև Հեթում I թագավորի երկլեզվյան դրամների վրա եղած արաբատառ խորագրերի հայերեն թարգմանությունները։ Բացի դրանից Հեթում—Քայկոբաղ և Հեթում—Քայխուսրաու անտարեթիվ դրամների մասին խոսելիս (էջ 227—228) լավ կլիներ նշել, թե անվանապես որ Քայկոբաղի կամ Քայխուսրաուի մասին է խոսքը։

Առավել կատարյալ է, մեր կարծիքով, Սմբատ թագավորի պղնձյա դրամների նկարագրության ձևը (էջ 325) և նույնքան հաջող, թեև մի այլ խմբագրությամբ են ներկայացված Կոստանդին I-ի դրամները (էջ 334)։

Այս ամենով հանդերձ պրոֆեսոր Ջարեհ Պտուկյանի «Կիլիկյան Հայաստանի դրամները» աշխատությունը խիստ արժեքավոր գործ է հայկական դրամագիտության մեջ, որի լույս ընծայումով ուրվագծվում է շատ ավելի լայն ասպարեզ հայատառ դրամների գիտական ուսումնասիրության համար, քան մինչև այժմ եղել է։

Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ

S. DER NERSESSIAN. *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art.* Washington, 1963, 131 pp., 108 pl. (Smithsonian Institution Freer Gallery of Art. Oriental Studies, № 6).

Литература по армянской миниатюре обогатилась новым монументальным трудом С. Дер-Нерсесян — самого крупного исследователя этой области искусства. Тексту книги предшествует небольшое предисловие Дж. А. Попа, директора Фрирской галереи искусства. В нем кратко излагается история собрания армянских рукописей Фрирской галереи, начало которому было положено в 1930 г. Общая характеристика этого собрания дается в авторском вступлении. Маленькая, но избранная коллекция ФГИ, включающая шесть евангелий, гимнарий и псалтырь, охватывает семь столетий (XI—XVII вв.). Евангелие XI в. является репрезентативным образцом школы армянской миниатюры, существовавшей вокруг Мелитены (Малая Азия) и в соседних монастырях Таврских гор. Четыре евангелия XII—XIII вв. написаны в Киликии, три из